

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը
 հայտարարում է 2017-2018 ուսումնական տարվա նպաստի ձևով ուսման
 վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ /անվճար հիմունքներով/
 ասպիրանտուրայի ընդունելություն` հետևյալ մասնագիտությունների
 գծով

Մասնագիտության դասիչ	Մասնագիտություն	Տեղերի քանակ
Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն.	2
Ը.00.02.	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում. (գործարար կառավարում, մակրոէկոնոմիկա, միկրոէկոնոմիկա, մարքեթինգ, բնօգտագործման տնտեսագիտություն)	5
Ը.00.03.	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում. (ֆինանսներ, արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, ապահովագրական գործ, բանկային գործ, կառավարչական հաշվառում և աուդիտ, ֆինանսական հաշվառում , վիճակագրություն)	7
Ը.00.06.	Միջազգային տնտեսագիտություն	1
Ը.00.08.	Մաթեմատիկական տնտեսագիտություն	2
Ընդամենը		17

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- 1) Դիմում` ՀՊՏՀ ռեկտորի անունով:
- 2) Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար` փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
- 3) Օտար լեզու ու ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով` բալային գնահատմամբ):
- 4) Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ` առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:
- 5) Ինքնակենսագրություն, 3 լուսանկար (3x4 չափսի), կադրերի հաշվառման անձնական թերթիկ:
- 6) Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 31-ը (ներառյալ):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
 Հասցե` ք. Երևան –25, Նալբանդյան 128
 հեռախոս` 593-426
 Ռեկտորատ